

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պոլսոյ հմր 8 Մէծ.  
3 Գաւառաց 10 Մէծ.  
Պոլսոյ 4 Մէծ.  
3 Գաւառաց 3 Մէծ.  
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.  
Դանուցման տողը մէկ անգամի հա-  
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-  
մար 2 դուրուշ, աւելի անգամներու  
համար զատ սակարկութիւն կըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1 ՀՈՒՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ լրագիրները Պ. Թիէրի մի-  
նոր բայց նշանաւոր ատենաբանու-  
թիւնը կը բերեն, զոր մեծանուն քա-  
ղաքագէտն իղէր Գաւառին բնակ-  
չաց կողմէ իրեն ներկայացնել պատ-  
գամաւորութեան մ'ուզողած է՝ Կը-  
րքնօղլի մէջ՝ ի պատասխանի անոնց  
երախտադիտական յայտարարու-  
թեանց:

Ահաւասիկ յիշեալ ատենաբանու-  
թիւնը, որոյ մէջ մի բառերն իմաս-  
տուն հայրենասիրութեան ներշնչու-  
թիւն են, և անուղղակի պատաս-  
խան իրեն դէմ արձակուած անիրա-  
ւամբաստանութեանց:

«Տեա՛րք իմ,   
«Շնորհակալ եմ՝ ձեր այդ պատ-  
գամաւորութեանն որ շատ պատուա-  
ւոր է ինձ համար, և ձեր առայդ-  
առաւ նշանակութեանն՝ զոր աղնիւ  
լեզուով մը կը յայտնէք:

«Այո՛, ևս ճշմարիտ անձնութիւն-  
թիւն մ'ըրի Պոլսոյ մէջ ինձ արուած  
ժանր պաշտօնն ընդունելով. վասն զի  
Գաւառ հայտնութիւն մը պէտք էր կըն-  
քել, ամենագուռ հայտնութիւն մը,  
որոյ նմանը կնքած չէր երբեք Գաղ-  
ղիա, և ինձ համար խիստ դժուակ  
էր անուն տալու զայն: Գաղղիոյ  
թիւնն մը ներքեւ դնել, ինձ համար՝  
որ ամեն ջանք բերելէ թոյլ չտալու  
այն յիմար պատերազմն՝ որ մեզ այն  
յետին վիճակին հասցեցած էր: Բայց  
և այնպէս վայրկեան մը չվարանե-  
ցայ: Միապետական ձեռք հին պաշա-  
պան ըլլալով հանդերձ Գաղղիական  
հանրապետութեան գործադիր իշ-  
խանութեան գլխոյ տնայտն ընդու-  
նելի: Այս տնայտնը ևս չընտրելի,  
այլ ազգային ժողովոյն մէջ յանձնաժո-  
ղովը, որոյ մէջ մեծամասնութիւն կը  
կազմէին անոնք՝ որ այսօր ինքզինք-  
նին միայն պահպանողական կը նկա-  
րեն. այն անձինքն են որ ինձ յանձ-  
նուած իշխանութիւնը հանրապե-  
տութիւն կոչեցին, և իրաւունք ու-  
նէին, վասն զի ուրիշ կառավարական  
ձեւ կամ անուն անհնարին էր այն  
միջոցին: Անշուշտ շատ մտքեր միա-  
պետութեան կողմնակից ըլլալով՝  
հանրապետութեանն նախագետ կը  
համարէին զայն: Բայց ի նպատակ հան-  
րապետութեան ժողովրդին ըրած ցոյ-  
ցերուն առջև ոչ ոք հնարաւոր դա-  
տեց միապետութեան վերահաստա-  
տութիւնը: Այնպիսի վերջ մ'անկա-  
րգութեան դէմ բարեկարգութիւնը  
յաղթող ընելու անկեղծ արդեւիք  
մի կըլլար, և ևս ալ ոչ միայն իշխա-  
նութիւնը չէի կրնար յարգել տալ,  
այլ և ոչ իսկ կրնայի փորձել անց-

նիլ և երթալ վերայի մէջ հաշտու-  
թեան բանակցութիւն ընել:

Առաջի ինչ որ կարելի էր, ինչ որ  
պէտք էր, զայն ըրին, և այսօր շատ  
ուշ է երեսն այդ աննահանջիկ հար-  
կը կրած ըլլալու համար մեզ դէմ  
արանջել: Աւելցուցէք թէ Եւրոպա  
մեր ոչոյնմունքը կը վաւերացնէր. ոչ  
ըզհետեւ ժամ հինգին աղբային ժո-  
ղովն ընտրուեցայ, և ժամ հինգ ու  
կէսին տեղութեանց ճանչելուն լուրն  
ստացանք, զոր չորս ամեկ ի վեր  
մերժած էին: Այսպէս ահա ևս հան-  
րապետութիւնն աղբային ժողովոյ  
ձեռքէն ստանալով՝ յայտնեցի անոր  
առջև թէ զինձ յանձնուած աւանդն  
հաւատարմութեամբ պիտի պահեմ.  
Հանրապետութիւն կը արուէր ինձ,  
ևս ալ հանրապետութիւնը պիտի յանձ-  
նէի իրենց, և Գաղղիա՝ վերքերը  
բժշկուելէ ետեւ թող իր բաղդն ու-  
րոյն:

Հազիւ ընտրուէր էի, փարիզ դի-  
մեցի և անտի ի վերայ, յաղթող  
և այն ժամանակ անդիմադրելի թըշ-  
նամուց մը դէմ այնպիսի պայքար մը  
մղելու, որոյ նմանը բնաւ որ և է  
գեղարարութեան մ'երեք մը-  
ղած չէր: Պէտքօր կորուլ կուզուէր  
մեր ձեռքէն. ևս յուսահատութեւ-  
նէս զոտ ուրիշ գէշը չունէի ձեռքս,  
և մտադիր էի ամեն բան աչքս առ-  
նալ՝ քան թէ թողուլ զՊէտքօր՝ որ  
Ռէնի կըրտեան միակ փոխարինու-  
թիւնը պիտի լինէր: Պէտքօր աղա-  
տեցաւ:

Փարիզ դարձայ, որուն շատ չան-  
ցած աղբային ժողովն ալ մտնեցաւ.  
վասն զի մեզ դիմելու ստիպուելով  
կառավարութիւնը պարտաւորեցաւ  
գաւառ երեսն այն քաղաքէն, ուր  
քանի մը հազար զօրականք չէին կըր-  
նար մարտել հայրենասիրութեամբ  
և աղմկայող սեւակ խռովեալ ժո-  
ղովուրդը զսպել: Ամեն խիստ միջոց-  
ներ ձեռք տալի, որչափ և Գաւառ է-  
ին, այն խռովեալ ժողովուրդը բա-  
րեկարգութեան և օրինապահութեան  
բերելու համար: Վեց շաբաթուան  
մէջ 160000 զօրաց բանակ մը կազ-  
մուեցաւ, և փարիզ կորուցաւ ան-  
միտներուն ու ստահակներուն ձեռ-  
քէն, որք երկրին օրինաց հպատակիլ  
չէին ուղեր: Կըհարցնեմ ամեն անոնց՝  
որք այն անցքերուն ականատես ե-  
ղան. կրնայինք միապետութեան ա-  
նունով փարիզի դռները բռնաբա-  
րել: Եթէ միապետութիւնը վերահաս-  
տատելու կայր մտքն ընէինք, Գաղ-  
ղիոյ ամենամեծ քաղաքներն ստա-  
հակեալ խռովեան հետ միանալ կ'ըս-  
տուէրային, և այն ժամանակ բարե-  
կարգութիւնը չէր կրնար երբեք ան-  
կարգութեան յաղթել: Բայց հե-  
տեւեալ օրը, կրտսն մեզ երբեմն, ան-  
կարգութիւնն յաղթուելէ ետեւ, կըր-  
նայինք միապետութիւնը վերահաս-  
տատել: — Այսինքն, առջի օրը աղ-

բային ժողովին առջև բարձրաձայն  
յայտարարել և ժողովն ալ իր դիր-  
քով մեր խօսքերը հաստատելէ ետեւ  
թէ մեր բարեկարգութեան համար  
միայն կը մարտնչէինք. և ոչ միապե-  
տական վերանորոգութեան մը հա-  
մար, հետեւեալ օրն անամթաբար  
մեր խօսքը սուտ հանէինք: Ոչ,  
տեա՛րք իմ, այդ մեղադրանքը մեզ  
ընդունելով թող տոք երեսն և այդ  
խոստմանպանցութեան նախատինքն  
իրենց վրայ աւանդին: Բայց չըրին,  
և պատուի ձայնը սրտերուն մէջ  
համաձայնեցաւ խոհեմութեան ձայ-  
նին հետ: Հեռեւեալ Բոնա՛ւ:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 9 հոկտ.

Պուէնոս—Այրէսի ապստամբու-  
թեան վերաբերեալ լուրերը շատ ծա-  
նըր են:

Մոսկիւ 9 հոկտ.

Մայր թագուհւոյն Պապական կը-  
րօնքն ընդունելուն արարողութիւնն  
երէկ կատարուեցաւ:

Վիեննա 9 հոկտ.

Օսմանեան արժէքները կը փըն-  
աղուին ու կը բարձրանան:

Փարիզ 9 հոկտ.

Կուսակցութեանց իւրաքանչիւ-  
րին դիրքը գրեթէ անփոփոխ է:

Պէրլին 9 հոկտ.

Արմիա կոմիտէն բանտարկութիւնը  
հաստատուեցաւ. գաւառական ատենէն:

Գաւառ 9 հոկտ.

Ներսիս Զուրբը նուազելու վը-  
րայ են:

Պէրլին 10 հոկտ.

Հանրազգային թղթատարական  
միութիւնն ստորագրեցաւ:

Մատրիա 9 հոկտ.

Լազէրնա զօրապետը Լա Կուար-  
տիա քաղաքը Գարրոսեանց ձեռքէն  
առաւ:

Վիեննա 10 հոկտ.

Բուլմանիոյ իշխանը մայրաքաղա-  
քէն մեկնեցաւ ի Պուէրթէ:

Քարիզ 10 հոկտ.

Գաւառական ժողովոյ ընտրու-  
թեանց մէջ Պոնտարկութեանք քանի  
մ'աթոռ. շահեցան եթեմամեանց վը-  
րայ:

Ֆիորենցա 11 հոկտ.

Պ. Թիէրի մեր քաղաքը հասաւ:  
Այր հաւատուն թէ Հեռոմ երթալու  
դիւաւաւորութեանն ետ կ'ենցած է:

Փարիզ 11 հոկտ.

Պ. Կրամօն Աւարոս—Բրուսիական  
պատերազմին վրայ յայտնութիւններ  
ընելու կը պատրաստուին, որք Պ. Պի-  
մարի շատ կը դաշին:

Պէրլին 10 հոկտ.

Արմիա կոմիտէն բանտարկութիւնն  
և անոր դէմ ի դարձ գրուած մի-  
ջոյնները մեծ ազդեցութիւն բրին:

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-  
ծակը թմբագրութեան վրայ է:  
Լրագրոյ մեքաբերեալ նամակ  
կամ որ եւ իցէ գրութիւն թմբագիր  
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-  
լս, Չինիլի խան, Մատթի գրասեն-  
եակը:  
Ճամբու ծախքը չվճարուած նա-  
մակ չընդունուիր:

Լրագիրները լուստու բացատրու-  
թիւններ կը պահանջեն փարիզի հին  
գեղարարին դէմ բացուած դատին  
վրայ, որպէս զի հասարակաց կարծի-  
քը հանդարտի:

Պէրլին 11 հոկտ.

Արմիա կոմիտէն հիւանդութիւնը  
ժանրանալով բժշկները զայն ապա-  
քինարան մը փոխադրելու խոր-  
հուրդ տուին: Հիւանդութիւնը շա-  
քարախտ է:

Պէրլին 10 հոկտ.

Թղթատարութեան գաղափարն  
ստորագրուեցաւ տեղութեանց փո-  
խանորդներէն, և պարտաւորիչ պի-  
տի ըլլայ, թէ և Գաղղիա չուղէ ա-  
նոր տրամադրութիւնները գործադ-  
րել:

Պուէնոս—Այրէս 10 հոկտ.

Ապստամբները կը մտնեն մեր  
քաղաքին: Վաղը Ավելլանէտա նա-  
խագահ անոնց դէմ պիտի երթայ:  
Կառավարութեան զօրքը պատրաստ  
է քայլելու:

Լոնտոն 10 հոկտ.

|                  |       |        |
|------------------|-------|--------|
| Օսմ.             | Քոնս. | 46 1/2 |
| Դոն.             | 1865  | 70     |
| »                | 1869  | 55 1/4 |
| »                | 1871  | 65 1/2 |
| »                | 1872  | 85     |
| »                | 1873  | 53     |
| Նոր փոխադրութիւն | 3     |        |
| Անգլ. Քոնս.      | 92    | 7/8    |

Լիվերպուլ 10 հոկտ.

Բամպակ Միտիկ—Օրէշան 8 — 3/8  
» Յայր Տօլերա 5 1/4 — 3/8  
Միտիկ 42000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փախաղեան վսեմաշուք Գեորգ-  
էֆէնտին ուրախ իրիկուն Դաւիթ-  
տար թօփհանէ Օղլուն իր ամառանո-  
ցի քեօլիկն մէջ շքեղ կոչունք մը տը-  
ւաւ տէրութեան նախարարներուն:

Աղէքսանդրիայէն երէկ լուր եկաւ  
հեռագրով թէ նախորդ Մեծ—Եղար-  
րոս և այժմ Հիւանդի կուսակալ Շիր-  
վանիդատէ Մէհմէտ Բիւշտի փաշան  
վախճանեալ է:

Կիրակի օրը Բամպակի առաջին  
օրն ըլլալով, Տէրութեան պաշտօնա-  
րանները չբացուեցան: Կրտսէր թէ  
երկուշաբթի և չորեքշաբթի օրերն  
ալ չպիտի բացուին մինչև Բամպա-  
կի վերջը:

Թղթատարութեանց վերաբեր-  
չութիւնը կը ծանուցանէ թէ օտար  
երկիրներու հետ ծածուկ լեզուով կամ  
թուանշանով հեռագրութիւնները  
նորէն կընդունուին տէրութեան հե-  
ռագրական կայաններէն:





